ՏԵՂԵԿԱՆՔ

««ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (Կ-235-12.04.2022-ԳԿ-011/0) ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կրթության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 1999 թվականի ~~մայիսի~~ ապրիլի 14~~8~~-ի ՀՕ-297 օրենքի ~~(այսուհետ՝ Օրենք)~~ 18-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ չորրորդ պարբերությամբ.

«Պարտադիր տասներկուամյա միջնակարգ կրթության իրավունքի իրացման համար սույն հոդվածի 7-րդ մասի առաջին պարբերությունում նշված տարիքային սահմանափակումը չի տարածվում քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձեւով պատիժ կրող այն դատապարտյալների վրա, ում պատժից ազատման ժամկետի լրանալուն կրթության իրավունքի իրացման վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելու պահին մնացել է 1 տարուց ավելի: Սույն ~~հոդվածում~~ պարբերությունում նշված անձինք, իրենց ցանկությամբ, կարող են իրացնել իրենց կրթության իրավունքը (միջնակարգ կրթություն ստանալ)՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի օգոստոսի 1-ից: